

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2019թ. հունվարի 22-23-ը ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Սերունդների և գենդերային ծրագրի 2020 շրջափուլը» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին,
- ✓ 2019թ. հունվարի 23-24-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Շանհայում (Չինաստան) կայացած «Գլոբալ նպատակները Կայուն զարգացման համար 2030թ. օրակարգի իրականացման համար Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում» խորագրով ուսուցման կոնֆերանսին,
- ✓ 2019թ. հունվարի 28-31-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Թուրինում (Իտալիա) կայացած «Երեխայի արգելված համարվող աշխատանքի և հարկադիր աշխատանքի վերաբերյալ տվյալների վերլուծության ազգային կարողությունների ստեղծում» խորագրով ուսուցման դասընթացին,
- ✓ 2019թ. հունվարի 28-ից փետրվարի 8-ը ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Վճարային հաշվեկշռի վիճակագրության հավաքագրումը» խորագրով դասընթացին,
- ✓ 2019թ. փետրվարի 3-7-ը ՀՀ ՎԿ «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի ավագ տնտեսագետ, աշխատողների արհեստակցական կազմակերպության նախագահ Մ. Պետրոսյանը մասնակցել է ք. Թեյ-Ավիվում (Իսրայել) կայացած Իսրայելի պետական աշխատողների արհմիության համագումարին և հարակից միջոցառումներին,
- ✓ 2019թ. փետրվարի 5-8-ը ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Միջազգային միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքագրման և օգտագործման կատարելագործումը՝ Կայուն զարգացման նպատակների 2030 օրակարգի համատեքստում» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին,

- ✓ 2019թ փետրվարի 12-13-ը ՀՀ ՎԿ շինարարության վիճակագրության բաժնի պետ Ս. Պետրոսյանը և արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի վիճակագիր Ա. Հակոբյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Շինություններում էներգիայի արդյունավետության վերաբերյալ քաղաքական ֆորումին,
  
- ✓ 2019թ. փետրվարի 20-21-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Բնապահպանական – տնտեսական հաշիվների համակարգի ներդրում» խորագրով աշխատանքային հանդիպմանը:

## Առաքելություններ

- ✓ 2019թ. հունվարի 14-24-ը ՀՀ ՎԿ-ում էր Համաշխարհային բանկի փորձագետ Իգոր Չերնիշևը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում մեկնարկային հանդիպման կազմակերպման, ընթացիկ իրավիճակի գնահատման և հետագա քայլերի վերաբերյալ քննարկումներ իրականացնելու նպատակով,
- ✓ 2019թ. հունվարի 16-18-ը ՀՀ ՎԿ-ում էր GOPA կազմակերպության գլխավոր խորհրդատու, «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի ղեկավար Մարգարիտա Ռոիրը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում մեկնարկային հանդիպման կազմակերպման, ընթացիկ իրավիճակի գնահատման և հետագա քայլերի վերաբերյալ քննարկումներ իրականացնելու նպատակով,
- ✓ 2019թ. հունվարի 21-25-ը ՀՀ ՎԿ-ում էր Բաց տվյալների ձեռնարկության համար կենտրոնի տվյալների գիտնական Բրոկ Ֆաննինգը ԿՁՆ-ի Ազգային հաշվետվողականության հարթակի կատարելագործման, տվյալների բազայի ստեղծման և սերվերի կառավարման գծով դասընթաց անցկացնելու նպատակով,
- ✓ 2019թ. փետրվարի 4-8-ը ՀՀ ՎԿ-ում էր Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյակի փորձագետ Գեորգի Լենգյելը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Գյուղատնտեսության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2019թ. փետրվարի 18-22-ը ՀՀ ՎԿ-ում էր Լատվիայի կենտրոնական վիճակագրական բյուրոյի փորձագետ Դիտա Ջերմիտեն «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Զբոսաշրջության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2019թ. փետրվարի 25-ից մարտի 1-ը ՀՀ ՎԿ-ում էր GOPA կազմակերպության կողմից վարձված անկախ փորձագետ Ֆահրադ Մեհրանը «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի «Աշխատուժի հետազոտություն» բաղադրիչի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

## Տեղային սեմինարներ

- ✓ 2019թ. հունվարի 18-ին ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանում կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների տեղեկատվական համակարգի հայեցակարգի սցենարների և ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքների արդյունքների ներկայացման աշխատաժողովին,
- ✓ 2019թ. հունվարի 21-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում իրականացվող ՍԻԳՄԱ ելակետային գնահատման ամբողջական զեկույցի վերաբերյալ քննակմանը,
- ✓ 2019թ. հունվարի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի վերաբերյալ քննարկմանը,
- ✓ 2019թ. հունվարի 30-ին ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աջակցություն երկրում երեխայի աշխատանքի կրճատմանն ուղղված գործունեությանը» (CLEAR) ծրագրի շրջանակներում մշակված անկախ տեխնիկական վերանայված դիտարկումների ներկայացման և առաջարկությունների քննարկման ամփոփիչ աշխատաժողովին,
- ✓ 2019թ. փետրվարի 6-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և դրան կից «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ», «Երեխաների վաճառքի, երեխաների մարմնավաճառության և մանկական պողոնոգրաֆիայի վերաբերյալ» կամընտիր արձանագրությունների իրականացման վերաբերյալ ազգային զեկույցի մշակման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի առաջին համդիպմանը,

- ✓ 2019թ. փետրվարի 6-ին ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանն իմիգրացիայի երկիր» փորձագիտական քննարկմանը,
- ✓ 2019թ. փետրվարի 12-ին ՀՀ ՎԿ նախագահի օգնական Հ. Գրիգորյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ Ն. Մարգարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ««Տեղեկատվության ազատությունը Հայաստանում» 16 տարվա փորձառություն» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2019թ. փետրվարի 13-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը և «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրի վիճակագիր Ա. Պողպոմոզովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Հարմարվողականության ազգային ծրագիր՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար» ՄԱԶԾ – ԿԿԸ Ծրագրի մեկնարկային աշխատաժողովին,
- ✓ 2019թ. փետրվարի 13-14-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Վ. Դավթյանը, ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Շահգելդյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներում միգրացիայի դերի ու նշանակության, միգրացիայի տվյալների հավաքագրման և պետության կողմից դրանց հետագա մշտադիտարկման մեխանիզմների քննարկման նպատակով կազմակերպված աշխատաժողովին,
- ✓ 2019թ. փետրվարի 14-ին ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած ԵԱՏՄ նորմատիվ-տեղեկատվական տեղեկատվության զարգացման հարցում վիճակագիրների մասնակցության հարցի քննարկման նպատակով աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2019թ. փետրվարի 19-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության, ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության վերաբերյալ ազգային շահագրգիռ կողմերի խորհրդատվական հանդիպմանը,
- ✓ 2019թ. փետրվարի 21-ին ՀՀ ՎԿ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Վ. Դավթյանը, ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Շախգելդյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԿԶՆ տվյալների աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2019թ. փետրվարի 22-ին ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ Հյուրանոցային տնտեսության ներդրումային ուղեցույցի քննարկմանը,
- ✓ 2019թ. փետրվարի 20-22-ը ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանում կայուն անտառկառավարման չափորոշիչներ և ցուցանիշներ» խորագրով երկրորդ ազգային աշխատաժողովին,
- ✓ 2019թ. փետրվարի 26-ին ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը և պարենային ապահովության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Անտոնյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԵԱՏՄ Սննդամթերքի անվտանգության հավաքական հայեցակարգի նախագծի վերաբերյալ փորձագիտական խորհրդակցությանը: